# Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆՆ ԸՆՏՐՎԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Մայիսի 31-ին Կանադահայոց թեմի 20-րդ պատգամավորական ժողովը ձայների մեծամասնությամբ նոր թեմակալ առաջնորդ ընտրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանին:

Ժողովը նախագահում էր թեմի նախկին առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, որ վերջերս ընտրվել է ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ:

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական գրով վավերացրեց նորընտիր առաջնորդի ընտրությունը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*